ՆԱԶԱՐ.– (Տեսնելով նրան եւ չնանաչելով) Ո՛վ է: (Փախչում է զանազան կողմեր:)

ՍԱՔՈ.– (Խլում է դրօշակը եւ վազում Նազարի հետեւից) Բը՛, բը՛, բը՛, բը՛…

ՆԱԶԱՐ.– (Նրանից փախչում է դէպի դուրս): Բը՛, բը՛, բը՛, բը՛…

ՍԱՔՈ.– (Հետեւում է նրան:)

ՆԱԶԱՐ.– (Վախից դողում է) Էհե՛յ… (Դողալով բարձրանում է այվանը:)

ՁԱՅՆԵՐ.– (Դրսից) Քաջ Նազա՛ր: Քաջ Նազա՛ր…

ՁՕՐԱՎԱՐ.– Վրա՛ տուէք…

ՈՒՐԻՇ ՁԱՅՆԵՐ.– Փախէ՛ք, փախէ՛ք…

ԱՌԱՆՁԻՆ ՁԱՅՆԵՐ.– Վրա՛ տուէք:

ՈՒՍՏԻԱՆ.– Սուրբ Մարիամ Աստուածածնայ իրան եմ ապաւինել, մեռնեմ իրեն: (Երեսը խաչակնքում է: Աղմուկը մեծանամ է:)

ՆԱԶԱՐ.– (Որ նոր էր հասել այվանի վրայ՝ արագ իջնում է ցած եւ վազում ներս… Մտնում է գահի տակ:)

ՍԱՔՈ.– (Վազվզում է սենեակում:)

ՁԱՅՆԵՐ.– Յաղթութիւն,

ՆԱԶԱՐ.– (Գլուխը դուրս է հանում) Հը՞: Յաղթե՞լ են: Գեադա՞, ո՞վ է յաղթել: (Դուռը բախում են: Սաքոյին) Բը՛, բը՛, բը՛, բը՛, դուռը կապի: (Գլուխը ներս է պահում:)

ՍԱՔՈ.– (Դողալով գնում է դուռը կողպելու: Ուստիանը բաց է անամ վարագոյրը, որ տեսնի դուրսը):

ՆԱԶԻՐ ԵՒ ՄԻԻՍՆԵՐԸ.– (Դրսից բախում են դուռը:)

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Յաղթութի՛ւն, թագաւո՛ր քաջ:

ՈՒՍՏԻԱՆ.– Ա՛յ մարդ յաղթեցին:

ՆԱԶԻՐ ԵՒ ՄԻԻՍՆԵՐԸ.– (Բախելով դուռը) Թագաւո՛ր քաջ, յաղթութի՛ւն:

ՆԱԶԱՐ.– (Դուրս է նայում գահի տակից) Ո՞վ յաղթեց: Հը՞, մերոնք են… Յաղթեցի՞ն:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Ներս մտնելով ուրիշ դռնով) Տէր ի՛մ, մերոնք յաղթեցին:

ՆԱԶԱՐ.– (Հանգստանում է, քրտինքը սրբելով դուրս է գալիս) Հա՛, լա՛վ արին, որ յաղթեցին, թէ չէ էն է աշխարհքը քանդում էի: (Հազում է) Ըհը՛…

ԺՈՂՈՎՈՒՐԴ.– (Դրսից) Յաղթութի՛ւն, կեցցե՛ թագաւորը:

ՆԱԶԱՐ.– Հա՛յ, բախտդ սիրեմ, Քաջ Նազար՝ էս էլ փրթեցիր: Էհ, Ուստիա՞ն, հիմի աչքդ բարին տեսնի, դու թալանին մտիկ, որ կբերեն:

ՈՒՍՏԻԱՆ.– (Խնդռուզի տալով) Վո՞ւյ, ինչ լաւ բան է թագաւոր-թագուհին: